

Այսօր՝ Ուրբաթ, 24 Մայիս 2002ի «Ազդակ»ի մեր թիւին հետ անպայման պահանջեցէք Մոնտիալի մրցումներուն ամբողջական յայտագիր - տպատակը՝ գունատուր եւ բարձրորակ տպագրութեամբ:

Յովհաննէս Պօղոս Բ. պապը աւարտելէ ետք Ազրայէճան իր միօրեայ այցելութիւնը, երէկ երեկոյեան մեկնեցաւ Պուլկարիա, չորսօրեայ այցելութեան մը համար:

Պուլկարիա, որուն կաթողիկէ համայնքը կը հաշուէ 80 հազար հաւատացեալ, կը լուսայ, որ պապի այցելութիւնը կը բարձրացնէ երկրին վարկը Արեւմուտքին մէջ, պարկ կու տայ ՕԹԱՆԻ անդամակցելու ուղղութեամբ երկրին արտաքին քաղաքականութեան եւ պահ մը լուսարձակները կը հեռացնէ տնտեսական տագնապէն:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԼԻՔԱՆԱՆԻ ԱՉՍԱԳՐՈՒԹԵԱՆ Բ. ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

ԱՉԳԱՅԻՆ ՄԿՁԲՈՒՆՔ Է ԳԻՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԱՆՔԸ ԿԸՍԷ ՆԱԽԱԳԱՐ ԼԱՇՈՒՏ

Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ դիտել տուաւ, որ լիբանանցիք ղէմ յանդիման կը գտնուին քաղաքական, տնտեսական, ընկերային բազմաթիւ մարտահրաւէրներու, որոնք դիմագրաւելու համար անհրաժեշտ են միացեալ կեցուածք եւ համախումբ վճռակամ ճիգ:

Հարաւի եւ արեւմտեան Պեքաայի ազատագրումի երկրորդ տարեդարձը շնորհաւորելու համար Պապատայի նախագահական պալատ այցելած բանակի հրամանատարութեան պատուիրակութիւնը ընդունած ատեն, նախագահ Լահուտ յիշեցուց, որ ազատագրումը իրագործուեցաւ միայն երբ լիբանանցիք տուին միացեալ որոշում եւ համախմբուեցան իրենց պետութեան, ազգային բանակին եւ դիմագրութեան շուրջ, իրագործելով ղէմ պատմական յաղթանակը, որուն երկրորդ տարեդարձը կը նշենք այսօր. նախագահ լիբանանցիք երկար տարիներ սպասած էին, որ Իսրայէլ գործադրէ ՄԱԿի թիւ 425 որոշումը եւ կոչեր ուղղած էին մեծ պետութիւններուն, սակայն ապարդիւն:

«Այս տարի այս առիթը կը նշենք յանպիսի պահու մը, երբ Միջին Արեւելքը մտահոգիչ զարգացումներ կ'ապրի. այս վիճակին պատճառն է Իսրայէլի քաղաքականութիւնը, որ հարուածներ կու տայ խաղաղութեան գործընթացին», ըսաւ ան: Նախագահը աւելցուց, որ ի տես այս մտահոգիչ զարգացումներուն, կը վերահաստատենք, որ զօրավիգ կը կանգնինք արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութիւն հաստատելու ճիգերուն, բայց ազգային սկզբունքը կը մնայ դիմագրութեան ընտրանքը:

Հանրապետութեան նախագահը դիտել տուաւ, որ ազատագրումին յաջորդած հանգրուանին զիջաւոր մարտահրաւէրներէն է տնտեսականը, որ հրամայական կ'ըլլայ իրաւունքները մէկտեղելով՝ վերականգնելու անոր իրաւունքները եւ զարկ տալու երկրին արտագրութեան:

Նախագահ Լահուտ այս առիթով ողջոյնի խօսք ուղղեց բանակի եւ դիմագրութեան նահատակներուն, ինչպէս նաեւ հարաւի եւ Պեքաայի բնակչութեան, որ 22 տարի դիմացաւ իսրայէլեան բռնագրաւումին: Ան վերահաստատեց, որ Լիբանան կառչած կը մնայ իսրայէլեան բռնութեան մէջ արգելափակուած իր զականներուն ազատ արձակման պահանջին:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՎԱՐՁԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԸՆԹ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հաւրիյի եւ անոր պեղուցեց ֆրանսալիսու երկիրներու մարկախաղերու 2009ի մրցաշարքը Լիբանանի մէջ հիւրընկալելու գծով իր աշխատանքներուն մասին. վարչապետը մեծ հետաքրքրութիւն ցուցաբերեց այս գծով եւ յանձն առաւ աջակցիլ նախարարին ճիգերուն:

Նախարար Յովնանեան նաեւ արծարծեց մարկախաղի ակումբներուն եւ ֆետերատիւններուն օժանդակութիւններու հարցը. օժանդակութիւնները ստեղծուած են էլեմէնտարի նախարարութեան կողմէ: Քննարկուեցան նաեւ մարմնակրթութեան նախարարութեան աշխատանքները եւ ապագայի ծրագիրները:

Նախարար Յովնանեան երէկ նաեւ ներկայ գտնուեցաւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան հարցերու խորհրդարանական յանձնախումբի ժողովին. վոր զլիաւորեց երեսփոխան Էմիլ Էմիլ Լահուտ: Քննարկուեցան նախարարութեան վերակազմակերպման օրինագիծն ու երիտասարդական գործունէութեան ներուկ կանգնելու միջոցները:

ՊԱՂԵՍՏԻՆՅԻՔ ԹԱՓ ԿՈՒ ՏԱՆ ԸԱԿԱԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Ռիշոն Լեցիոնի անձնապահական գործողութենէն քանի մը ժամ ետք, պաղեստինցիներ երէկ փորձեցին հրոյ ճարակ դարձնել Թէլ Աւիւի մօտ գտնուող վառելիքի մթերանոց մը: Թէլ Աւիւի ոստիկանապետ Տէյվիտ Քրաուսըրը ըսաւ, որ կարելի եղաւ աղէտէ մը փրկուիլ:

Ոստիկանութիւնը յայտնեց, որ ենթադրաբար պաղեստինցի «ծայրայեղականներ» ականներ դրած են քարիւղատար բեռնակառքի մը վրայ, որ վառելիքի մթերանոցի փոխարէն յիշեալ կեդրոնէն, որ Հերցլիա քաղաքին մօտ կը գտնուի: Ըստ ոստիկանութեան, պաղեստինցիները պիտի պայթեցնէին բեռնակառքը, երբ լեցուէր եւ պայթումին պատճառով ծագելիք հրդեհը պիտի քանդէր ոչ միայն մթերանոցը, այլ նաեւ պիտի տարածուէր շրջանին մէջ: Պայթումը տեղի ունեցաւ, սակայն կեդրոնին մէջ գտնուող աշխատակորներ յաջողած են կրակը մարել՝ տարածուելէ առաջ:

Թէլ Աւիւի շրջանին պայթումէն քանի մը ժամ առաջ, Չորեքշաբթի գիշեր անձնասպանական



Սիթերը, գործարարական ոստիկանութիւնը յայտնաբերեց՝ նախքան պայթումը:

գործողութիւն մը կատարուած էր Ռիշոն Լեցիոնի հանրային մէկ պարտէզին մէջ, ուր երեք հոգի սպանուեցաւ եւ քանի մը վիրաւորներ արձանագրուեցան: Աւելի ուշ, Ռիշոն Լեցիոնի պայթումին պատասխանատուութիւնը ստանձնեց «Աքսալի Նահատակներու Փայտակար» շարժումը, որուն ղեկավարներէն՝ Մահմուտ Թիթի եւ երկուսն ալ հետեւողները սպանուած էին Չորեքշաբթի օր իսրայէլեան ուժերուն կողմէ արձակուած հրթիռով մը: Հա-

զարաւոր պաղեստինցիներ երէկ մասնակցեցան Թիթի եւ երկու զինեալներուն յուզարկաւորութեան, Նապլուսի Պալմիթա գաղթականներին մէջ: «Աքսալի Նահատակներու Փայտակար» շարժումին մէկ ղեկավարը երէկ յայտարարեց, որ Իսրայէլի ղէմ անձնասպանական գործողութիւնները պիտի շարունակուին, որովհետեւ պաղեստինցիներուն արևը աժան է: Իսրայէլի կառավար-

Շար.՝ Էջ 10

ՊՈՒՇ ԳԵՐՄԱՆԻԱՅԷՆ ԱՆՅԱԻ ՌՈՒՄԻԱ

ՊԵՐԼԻՆ, 23 (ՌՈՑ-ԹԸՐԶ).- Մ. Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ Հինգշաբթի օր եւրոպացի դաշնակիցներուն կողմէ ղեկավարեց ՕԹԱՆԻ վերածելու այնպիսի ուժի մը, որ անիկա կարենայ ահաբեկչութեան ղէմ պայթաւորի, զգուշացնելով, որ Մ. Նահանգներ եւ ՕԹԱՆԻ միւս 18 անդամները Սեպտեմբեր 11 յարձակումներուն նման այլ յարձակումներու կրնան ենթարկուիլ:

Գերմանիոյ խորհրդարանին մէջ խօսք մը արտասանելով, Պուշ յայտարարած է. «Այս պատերազմին մէջ միայն Ամերիկան կամ Եւրոպան չէ, որ կը պաշտպանենք, այլ կը պաշտպանենք ամբողջ քաղաքակրթութիւնը»:

Ան զգուշացուցած է, որ «եթէ անտեսենք այս սպառնալիքը, առանց այլեւայլի շանթաբերելու կը բռնանք եւ մեր քաղաքացիներէն միլիոնաւոր անձերու կեանքը կը վտանգենք»:

Գերմանիա առաջին հանգրուանն էր Պուշի եւրոպական մէկ շարժումն շրջապտոյտին: Ան վստահեցուցած է եւրոպացի դաշնակիցները, թէ Ուաշինկթըն բարեկամ մը կը մնայ հակառակ իրաքի, առեւտուրի եւ կենսոլորտի հարցերով գործիւն ունեցող մեծ տարակարծութիւններուն:

Ան իրաքի նախագահ Մատամ Հիւսէյնը քաղաքակրթութեան ղէմ սպառնալիք մը նկատած է, յայտնեցով, որ անոր պէտք է ընդդիմանալ կարելի բոլոր միջոցներով, սակայն ան նախագահ Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրէօտըրի



Պուշ եւ Շրէօտըր՝ մամլոյ միացեալ ասուլիսի ընթացքին:

վստահեցուցած է, որ սեղանի վրայ պատերազմի ծրագիրներ չունի:

Շրէօտըր մերժած է յայտնել, թէ զօրավիգ կը կանգնի՝ զինուորական որեւէ գործողութեան Սատամ Հիւսէյնը տապալելու նպատակով, կամ ոչ:

Միւս կողմէ, Պուշ կողմէ ղեկավարեց Ռուսիոյ, որ դադարի իրանի կորիզային օժանդակութիւն յատկացնելէ:

Նախագահը Հինգշաբթի յետմիջօրէին Գերմանիայէն մեկնած է Ռուսիա:

Ի տարբերութիւն Հերմանիայի ընդունելութեան, որուն արժանացած են ամերիկացի նախագահները, երբ Պերլի-նի Պատը կանգուն էր, շուրջ 20 հազար հոգի Պուշի ղէմ ցոյց կատարած են Չորեքշաբթի գիշեր անոր պանդոկին մօտ: Յոյսերը ըրտ դարձած են. ըստ պաշտօնատարներու՝ 44 հոգի վիրաւորուած է եւ շուրջ 50 ցուցարար ձերբակալուած:

ԽՈՐՀՂԱՐԱՆԻՆ ՍԷՋ ԲՈՂՈՔ

Գերմանիոյ խորհրդարանին մէջ, մինչ Պուշ խօսքը կ'արտասանէր, քանի մը հոգի բարձրացուցած է ցուցատախտակ մը, որ Պուշէն եւ Շրէօտըրէն կը պահանջէր, որ իրենց պատերազմը դադարեցնեն: Կարճ պահ մը աղմուկ տեղի ունեցած է խորհրդարանին մէջ, մինչ պաշտօնակցութեան պատասխանատուները ցուցատախտակը դուրս կը հանէին:

Եւրոպայի մէջ, Պուշ խիստ քննադատութեան ենթարկուց, բանալի հարցերու գծով Ուաշինկթընի միակողմանի կեցուածքներուն պատճառով: Մ. Նահանգներ քաշուած են ընդհանրական ջերմացումի վերաբերեալ Քիթոյի համաձայնագրէն եւ հրաժարած՝ համաձայնութենէ մը, որուն Հիմամտ ամիսագրային ոճրագրտ տեխնիկայի հաստատուէր:

ՔՈՉԱՐԵԱՆ - ԱԼԻԵ ԶԱՆԴԻՊՈՒՄԻ ԾՐԱԳԻՐ՝ ՄԱՅԻՍԻ ՎԵՐՁԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Լրատուական որոշ աղբիւրներու համաձայն՝ Մայիս ամսուան վերջաւորութեան կը ծրագրուի Հայաստանի եւ Ազրայէճանի նախարարներու հանդիպում մը կայացնել Փրակայի մէջ, ուր վերջերս հանդիպում ունեցած էին երկու երկիրներու արտաքին գործոց փոխ նախարարները:

Հայաստանի նախագահի բանբերը «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է, թէ նախագահներ Քոչարեան եւ Ալիե ծրագրած են հանդիպիլ մօտ ապագային, սակայն հանդիպման ժամկէտն ու վայրը տակաւին որոշուած չեն:

Չիխոյ արտաքին գործոց նախարարութիւնը ոչ հաստատած է, ոչ ալ հերքած է հանդիպման վերաբերեալ հաղորդումները: Չիխոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչը յայտնած է, որ հայ - ազրայէճանական բարձր մակարդակի հանդիպումի մասին տեղեկութիւններ չունին, սակայն Փրակայի պատրաստ է հիւրընկալելու Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացի մասնակիցները:

(ԱՐՄԵՆԻԱՐԵՍ)

ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԵՒ ՊԱՔՈՒԻ ՄԻՋԵԻ ՉԵՐՄ ՍԻՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

«Թուրք» լրատու գործակալութիւնը տեղեկացուց, որ Ազրայէճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ապիւ Չորեքշաբթի օր ընդունեց Եւրոպայի մէջ Ամերիկեան Յատուկ Գործողութիւններու Հրամանատարութեան հրամանատար զօր. Լէսլի Տուլըրը: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Միացեալ Նահանգներու եւ Ազրայէճանի միջեւ համագործակցութիւնը, զինուորական մարզէն ներս:

Ապիւ Տուլըրի ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի տագնապի ընթացքը եւ դիտել տուած է, թէ Հարաւային կովկասի ռազմաքաղաքական իրավիճակը կը մնայ «լարուած»: «Հայեր կ'օգտագործեն Ազրայէճանէն բռնագրաւուած տարածքներ» ստեղծելու համար ահաբեկչական խմբակներ եւ օժանդակութիւն տրամադրելու քրտական ահաբեկչական ԲԱԿ կուսակցութեան», ըսած է Ապիւ, աւելցնելով, որ շրջանին մէջ Հայաստանի «քանդիչ» դերակատարութիւնը հետզհետէ կը հասնի իր աւարտին:

Աւելին. Ապիւ Տուլըրի յայտնած է, թէ «բռնագրաւուած տարածքներու» վրայ հայկական կողմի կուտակած զինամթերքը սպառնալիք է Պաքու - Թիֆլիս - Ճէյհան քարիւղատարին: «Ժամանակն է, որ Հայաստան յարձակողապաշտ երկիր նկատուի», ըսած է Ազրայէճանի պաշտպանութեան նախարարը:

Իր կարգին, ամերիկացի զինուորականը ընդգծած է, թէ ռազմաքաղաքական տեսակէտէն Ազրայէճան մեծ արժէք կը ներկայացնէ եւ հաւատարմացուցած է, թէ պիտի ծաւալին Ազրայէճանի եւ Միացեալ Նահանգներու, ինչպէս նաեւ ՕԹԱՆԻ հետ զինուորական յարաբերութիւնները: Տուլըր տեղեկացուցած է, թէ Միացեալ Նահանգներու Մովուսի եւ Յատուկ Ուժերու ներկայացուցիչներ Ազրայէճան պիտի հասնին այս տարուան վերջաւորութեան, նաեւ ակամազերծման կեդրոն մը պիտի հաստատուի Ազրայէճանի մէջ:

Նէնսի Մաքէլտաուսի, Ազրայէճանի մէջ Միացեալ Նահանգներու ղեկավարին տեղակալը, որ մասնակցեցաւ Ապիւ - Տուլըր հանդիպումին, յայտնեց, թէ ամերիկեան ընկերութիւններու մասնակցութիւնը Պաքու - Ճէյհան քարիւղատարի կառուցման, զարկ պիտի տայ Միացեալ Նահանգներու եւ Ազրայէճանի միջեւ զինուորական համագործակցութեան զարգացման:

«ԵՐԿԻՐ»Ը՝ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՌԻՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ

30 Մարտ 2002ին, «Երկիր»ի Լիբանանի մէջ հրատարակութեան առիթով, «Ազդակ» կը յայտնէր. «Կը գիտակցիցնք, որ ուղղագրութեան հարցը իր անպատեհութիւնները կրնայ ունենալ յատկապէս մեր երիտասարդ ընթերցողներուն վրայ: Սակայն արհեստագիտութեան այսօրուան կարելիութիւնները մտածել կու տան, որ վաղը մենք պիտի ունենանք հաւանաբար համակարգչային այն ծրագիրը, որ արեղեանական ուղղագրութիւնը «Երկիր»ը վերածէ Մեսրոպեան ուղղագրութեան»:

Այսօր, ուրպիտեան կ'ուզենք մեր ընթերցողներուն սեփականութիւնը դարձնել, որ Շաբաթ, 25 Մայիս 2002ն սկսեալ «Երկիր»ը Լիբանանի մէջ լոյս պիտի տեսնէ Մեսրոպեան ուղղագրութեամբ:

Համակարգչային համապատասխան ծրագիրն հեղինակն է Արամ Գորոյեան:

«Ա.»

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԺՈՂՈՎԸ

Նախարարաց խորհուրդը երեկ երեկոյան Թանգարանի շրջանի իր նստավայրին մէջ գումարեց հերթական նիստ մը: Նախագահ զօր. Իմիլ Լազուտի զխաւորութեամբ եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայութեամբ, ժողովը քննարկեց ընթացիկ հարցերու վերաբերող օրակարգ մը:

Տեղեկատուութեան նախարար Ղազի Աթիտի ժողովին նստարարեց, որ վարչապետ Ռաֆիք Հարիրիի ժողովին ներկայացուցած է օրինագիծի առաջարկ մը, որուն հիմամբ խորհրդարանին կ'առաջարկուի ընդունել հետաձայնի ապագետականացման օրինագիծին վրայ աւելցնել յօդուած մը, որուն հիմամբ գործադիր իշխանութեան ծիրէն ներս բոլոր պաշտօնատարներուն, անոնց ենթակայ պաշտօնեաներուն եւ ընտանեկան պարագաներուն կ'արգիւրդի որեւէ ձեռնարկ մասնակից ըլլալ այս ապագետականացման գործընթացին, կամ այդ գործընթացին ծիրէն ներս անուրիքի եւ նուազուրիքի մասնակցող ընկերութիւններուն:

Արիտի նաեւ յայտնեց, որ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ ժողովին փոխանցած է, որ Լիբանան - Եւրոպա գործընկերութեան համաձայնագիրի վերջնական ստորագրութիւնը տեղի պիտի ունենայ Յունիս 17ին:

ԱՐԳԻԼԵԱԼ «ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՌԻՃԵՐ»ՈՒ ԺՈՂՈՎ

Հանգստեան կոչուած զօր. Ֆուատ Մալէք երեկ ղեկավարեց արգիւնայ «Լիբանանեան ՌեՃԵՐ» կուսակցութեան ղեկավարութեան ժողովը, որ հաղորդագրութեամբ մը հարց տուաւ, թէ այս պետութիւնը կրնա՞յ հաւասար աչքով դիտել իր քաղաքացիները:

Հաղորդագրութիւնը պահանջեց ձեռքարկել եւ խստագոյն պատիժի ենթարկել երկրաչափ Ռամզի Իրանին սպաննողները:

ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ ԼԻԿԱՅԻ ԺՈՂՈՎԸ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ԻՐԱՆԻԻ ՀԱՐՅԻՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԱԳԱՅՆԵԼ

Մարոնիներու Լիկայի Գործադիր Խորհուրդը երեկ Հարիս Երզնկայի զխաւորութեամբ գումարուած իր ժողովին նստարարեց, որ հաղորդագրութեամբ մը նկատել տուաւ, որ երկրաչափ Ռամզի Իրանի առեւանգումը եւ սպանութիւնը բացառութիւն հարցականներ կը դնէ երկրին ապահովական վիճակին մասին:

Լիկան պահանջեց փութացնել արարքին հեղինակներուն բացայայտումը, կարեւորելով դատական իշխանութեան թափանցիկութիւնն ու հաւաստիութիւնը: «Եթէ ոճրագործները բացայայտուին եւ չպատժուին, կ'սպառնանք իրենց յիշատակը պիտի վատթարանան», ըսաւ Լիկայի հաղորդագրութիւնը:

ՄԱՀԱԶԴ

Լ. Օ. Խաչի «Նայիրի» մասնաճիւղի վարչութիւնը կը գուժէ իր շրջանի ընկերուհիներէն

ՆԻՐՎԱ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 22 Մայիս 2002ին:

ՄԱՀԱԶԴ

Տիար Սարգիս Ոսկերիչեան եւ զաւակները՝ Նանոր, Գէորգ, Նայիրի եւ Սեզա Տէր եւ տիկին Յովհաննէս Տարազեան եւ դուստրը՝ Քարոյ

Տէր եւ տիկին Կարապետ Չազարեան եւ զաւակունք Տիար Սարգիս Տարազեան

Տիկին Մելո Չուլամեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Հրայր Հալաճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Յակոբ Մուշեղեան եւ զաւակունք Ճէմէճեան ընտանիք

Մոմեան ընտանիք Ճէրէճեան ընտանիք Կէօվլէքեան ընտանիք Թաշեան ընտանիք Մարտիրոսեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, դստեր, քրոջ եւ հարազատին՝

ՆԻՐՎԱ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ (ՏԵՆԱՎ՝ ՏԱՐԱԳՃԵԱՆ, 1964ԻԳ)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 22 Մայիս 2002, երեկոյան ժամը 7:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 24 Մայիս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, ուր կ'ենթադրուին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահագր:

● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեային ճնդղից բնակարանը, Սիս, 10Իի «Ա. Պուլ-լուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի դիմաց, «Տարագեան» շէնք, Ուրբաթ 24, Շաբաթ 25 եւ Կիրակի 26 Մայիսին:

ԱՍՐ ՄՈՒՍԱ ՄԵԿՆԵՑԱԻ ԼԻԲԱՆԱՆԵՆ

Արարական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա երեկ «Ներդրումներու եւ դրամա-րուժեքի ընդդիմութիւնը, գլուխի արաբական շուկաներուն մասին Ը. խորհրդագծողով» ընթացման նիստին խօսք առնելով նկատել տուաւ, որ այս օրերուն աշխարհը առաջնահերթութիւն կու տայ միջազգային հարեկչութեան դէմ պայքարին: Միջազգային հարեկչութիւնը իսկապէս շատ վտանգաւոր է, բայց նուազ վտանգաւոր էլ իսրայէլի գործած զինուորական բռնազրա-

ւումը: «Արարներս պէտք է շարունակենք օտար բռնազրաւումին մեր ուժեղ ընդդիմութիւնը, բայց անոր գուժահեռ պէտք է շարունակենք նաեւ արաբական աշխարհի բարգաւաճման արշաւը», ըսաւ ան:

Մուսա երեկ նաեւ այցելեց արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտի. ան յայտարարեց, որ Համմուտի հետ քննարկած է Պէյրութի արաբական վեհաժողովի որոշումներու հետապնդման արար արտա-

քին գործոց նախարարներու յանձնարարութիւնը անդրանիկ ժողովը գումարեց յու նախապատրաստութիւնները, յայտնելով, որ այդ ժողովը պիտի գումարուի քանի մը շաբաթէն:

Արարական Լիկայի ընդհանուր քարտուղարը ըսաւ, որ խաղաղութեան արաբական նախաձեռնութեան նախարարական յանձնարարութեամբը հաղորդակցութիւններու սկսած է:

Ամր Մուսա յետմիջօրէին մեկնեցաւ Լիբանանէն:

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՆԵՐՈՒՆ ՎՃԱՐՈՒԵԼԻՔ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՐՏՔԵՐՈՒՆ ՀԱՐՅԸ ԼՈՒԾՈՒԹՅԱԻ

Սեփական հիւանդանոցներուն վճարելի պետական պարտքերու ուշացումին հարցը, որուն պատճառով սեփական հիւանդանոցները դադարած էին պետութեան հաշուոյն պարագաներ ընդունելէ, երեկ լուծուեցաւ:

Արդարեւ, վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ ժո-

ղով մը գումարեց սեփական հիւանդանոցներու սեփականատէրերու սենտիքայի պատուիրակութեան հետ, զոր զխաւորեց սենտիքայի նախարար Ֆուատ Մալէքի ժողովին ներկայ գտնուեցան առողջապահութեան նախարար Սէյման Ֆրեմիէ, Ելեմուտքի նախարար Ֆուատ

Մինիրա, պաշտպանութեան նախարար Նայիլ Հըրուտի եւ առողջապահական ապահովագրութեան պետական հաստատութիւններու ներկայացուցիչները:

Ատայմէ ըսաւ, որ ժողովը զրական էր եւ «վարչապետ Հարիրի ինք ըսաւ այն բաները, զորս մենք կ'ուզէինք ըսել»: Ան յայտնեց, որ հիւանդանոցներու վիճակը կարմիր գիծի հասած է եւ վարչապետը խոստացած է երկուշաբթի օրէն սկսեալ սկսիլ ուշացած պարտքերու վճարումը, որ պիտի շարունակուի մինչեւ Յունիս 10, իսկ այդ թուականէն ետք անվճար մնացած պարտքերուն արժեքով պետական պարտատուներ պիտի տրուին հիւանդանոցներուն, որոնք կրնան վաճառել զանոնք կամ պահել զանոնք անոնց տնտեսները:

Մինիրա ըսաւ, որ այդ պարտքերուն գումարը շուրջ 240 միլիարդ ռիալ է:

ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՅՍՈՐ ԱՆՑԵԱԼԷՆ ԱԻԵԼԻ ԼԱԻ Է ԿԸՍԷ ՊԵՐՐԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի Լիբանանի մէջ վերջերս գործուած ոճիրներուն ակնարկելով երեկ ըսաւ, որ «պատահածը Լիբանանն ու Սուրիան ծուռկի բեւելու փորձ մըն էր. անոնք կը կարծեն, որ այս արարքներով եւ ճնշումներով կրնան Լիբանանը քշել հարաւորեալ Սուրիան, բայց մենք պիտի շարունակենք դիմադրել բոլոր նիւթուող դաւերուն»:

«Իսրայէլ հանգիստ պիտի չձգէ մեզ եւ մենք միշտ անոր թիրախը պիտի մնանք, բայց հակառակ պատահած դէպքերուն, ապահովական

իմաստով այսօրուան մեր վիճակը անցեալին լաւ է», ըսաւ ան:

Իսրայէլի հիմնական նպատակներէն է շրջանային տագնապի լուծումին առընթեր յուսանցքայինէն աւելի վտանգի մատնել Լիբանանը, որովհետեւ ան միակն է, որ իրեն հետ տնտեսապէս մրցելու կարողութիւնը ունի, դիտել տուաւ խորհրդարանի նախագահը:

«ԿԵԱՆՔ ՄԸ ՓՐԿԵՆՔ» ՖՈՆՏԻՆ

● Մարի Պոյաճեանի մահուան քառասունըքն առիթով, փոխան հոգեձաշի, Սերոբ Պոյաճեան եւ ընտանիք՝ 100 \$

ԿՈՒՉՈՒԻ

● Semerjian Optic կարիքը ունի վաճառող երիտասարդուհիի մը: Դիմել՝ անձամբ: Կե. 01-260756:

STUDIO
Lantern

● Կը ստանձնէ ուրախ առիթներու video
Գկարահանումներ

Կե. 01-268368
եւ 03-695399

ԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ ՇԱՍԼԵԱՆ-ԹԱԹԻԿԵԱՆ

Շաբաթ, 25 Մայիս 2002, կէսօրէ ետք ժամը 4:00ին:

● Հանդիպումի աւարտին տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւնը:

Կապ մակերպութեամբ
Հ.Յ.Գ. Լ.Ե.Մ.ի "Համապատասխան" կորիպի

ՄԱՅԻՍ 28Ի ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ԿԸ ԲԱՆԱՊՈՒԵ
ԸՆԿ. ԵՍԱՅԻ ՀԱՒԱԹԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ
ՎԻԳԵՆ ՏԻՍՉԵՔԵՆԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ Կիրակի 26 Մայիս 2002ին, կէսօրէ ետք ժամը 4:30ին
Չափիէ ակումբին ներս:

ՏԵՍԱԿԵՏ

ԱԶՐՊԵՅՅԱՆ՝ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՆՑՔ...

Յովհաննէս Պօղոս Բ. պապը Պաքուի օղակայանին մէջ կատարեց պաշտօնացում ու մտահոգի յայտարարութիւններ, որոնց ամէնէն ուշագրաւը եղաւ Արաբիան քաղաքակրթութեան անցք նկատելը:

Ո՞ր քաղաքակրթութեան մասին է խօսքը: Երկիր մը, որուն գոյութիւնն անգամ կեղծ է, պատմական ոչ մէկ հիմ ունի, Արաբիան հողամասերու շինծու փայլը մըն է, իսկ ժողովուրդը՝ թուրք, որուն հարապատ պատկանէ մէկուն արձակած փամփուշտին համը անմարտ ճաշակած է Յովհաննէս Պօղոս Բ. պապը:

Հնուի քահանայապետը պարմանալի այլ հաստատում մըն այ կ'ընէ, յայտարարելով, որ Պաքուի մէջ տարբեր կրօններ կը պայքարին ներդաշնակութեամբ պարելու համար: Բայց ո՞ր կրօններուն է ի՞նչ ներդաշնակութեան մասին է խօսքը: Արդեօք պապը կը խօսի նախկին խորհրդային ժամանակաշրջանի տուեալներով, երբ օրին հոն միատեղ կ'ապրէին իսլամներ, քրիստոնէսներ, հրեաներ: Ներկայիս կարելի է այդպիսի ոչ հիմնարկաւ յայտարարութիւն կատարել: Պապը հարց չի՞ տար, թէ ո՞ր էն այսօր երբեմնի շուրջ կէս միլիոն հաշուող Արաբիանի հայերը. կամ ներդաշնակութեան չափանիշ է Սուրիայի իր հայոց քաղաքը: Իսկ եթէ իրապէս այդքան կրօնական հանդուրժողութեան ու քաղաքակրթութեան անցք է Արաբիանը, ինչո՞ւ միայն հարիւր քսան կաթոլիկներ կ'ապրին շուրջ չորս միլիոն բնակչութիւն հաշուող այդ երկրին մէջ:

Ի՞նչ է շարժառիթը այս յայտարարութիւններուն:

Նախկին խորհրդային երկիրներուն մէջ, որոնք բոլորն այլ անկախ են այսօր, յատկապէս ներկայ ԱՊՀ երկիրներուն մէջ յատկապէս, որ այլամերձութիւն մը կայ կաթոլիկութեան նկատմամբ: Հետպետէ պայլի կը դառնան անոր դէմ ցցուող արգելքները, ծաւալման փորձերուն դէմ բարձրացուող պատերը, անշուշտ անուղղակիօրէն, ինչ որ բնականաբար կը մտահոգէ պապը: Ուստի, ան պիտի փորձէ ամէն գնով դուրս գալ այս կացութենէն եւ միջոցներուն մէջ խտրութիւն պիտի չդնէ հասնելու համար նպատակին, այլապէս կաթոլիկութիւնը շատ աւելի լուսանցքի մէջ պիտի մղուի հակապատասխան շրջանէն ներս: Ահա թէ ինչու՞ պապը կը շոյալէ այդքան ի նպատակ Արաբիանի, գիտնալով հանդերձ, որ այդ յայտարարութիւնները ճիշդ չեն, իրականութեան չեն համապատասխան: Սակայն ինչ որ այլ ըլլան պատճառներ, ան իրաւունք չունի վուտ հատուածակա հաշիւներէ մեկնելով այսպիսի վտանգաւոր ու սխալ հաստատումներ կատարելու մասնաւոր պատմութեան եւ ճշմարտութեան հաշուոյն:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՂԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԿ

ՀՈՒՓՍԻՊԵՏԵԱՆՅ ԿՈՅՍԵՐՈՒ
ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ՝

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՏԻՈՅ ՄԷՉ

Ի գիտութիւն մեր բարեպաշտ ժողովուրդին, այսու կու գանք յայտնելու, թէ յառաջիկայ Երկուշաբթի, 27 Մայիս 2002ին, Ս. պատարագ պիտի մատուցուի եւ թափօր՝ Ս. կոյսերու մատուցմանով, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ երեկոյան ժամը 6:00ին, մասնակցութեամբ թեմիս բաժանայ հայրերուն եւ Դպրեվանքի սարկաւազներուն:

Ս. պատարագը պիտի մատուցէ եւ պիտի քարոզէ Դպրեվանքի տեսուչ՝

ԼՈՐԵՏ. Ս. ՊԱՐԹԵՒ ՎՐԴ. ԿԻԼԻԻՍԵԱՆ

Պատարագին պիտի կատարուի հաւաքական խոստովանման եւ հաղորդութիւն:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ՝ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը՝ 300 ամ. տոլարով:

Աղասարգիտեան ընտանիք իրենց ծնողաց յիշատակին, 25 Մայիս:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ

Այսօր կէսօրուան ժամը 1:00ին կրնաք լսել մեր հարցազոյրը

Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ
ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ ՀԵՏ

Մեթոնի երեսփոխանական ընտրութեանց մասին:

● Յայտագիրին կրկնութիւնը՝ երեկոյան ժամը 7:00ին:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 84ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 31 Մայիս 2002, երեկոյան ժամը 7:30ին, «Յ. Տեր Սելբոնեան» թատերասրահին մէջ:

«ԱՉԳԱԿ»-Ի ՀԵՏ ՌՈՆԵՑԱՍ
ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ

«ԼԻԲԱՆԱՆՅԻՒ ՄԵՐ ՔՈՒԷՆ
ԻՐ ԻՐԱՅԱՏՈՒԿ ԱՐԺԷՔԸ ՈՒՆԻ
ԱՅԳ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԵՆՔ ՊԵՏՔ Է
ՄԱՍՆԱԿՅԻՆՔ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ»

ԸՍՄԻ ԸԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԵՈՒԹԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՒՍԱՆՈՐԴ
ԿԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱԶԳԱՐԵԱՆ



ՀԱՐՑՈՒՄ.- Մեթոդի մասնակի ընտրություններում
ատրոփով հայ յարանուանություններում երեք հոգե-
տր պետերը մամուլով կոչ ուղղեցին լիբանանահա-
յութանքի իրենց քաղաքացիական պարտականու-
թիւնը կատարելու եւ խուններամ շարքերով ընտ-
րություններում մասնակցելու: Ի՞նչ էր այդ կոչին
նպատակը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Նախ կ'ուզեմ ըսել, թէ իւրաքանչիւր
մարդ ունի երկու հայրենիք. այն հայրենիքը, որ իր
նախնիներուն, պապերուն սեփական հողն է եւ ուր
ազատութիւն եւ պետականութիւն ունի եւ հոն դրօշը
ազատօրէն կը ծածանի. եւ երկրորդ հայրենիքը, ուր
ինք կ'ապրի ու կը գործէ: Մեր պարագային մեր հայ-
րենիքը Հայաստանն է, աւել մեր պապերուն նուիրա-
կան հողը, ուր ունինք պետականութիւն եւ որուն
դրօշը ոչ միայն հոն կը ծածանի, այլեւ՝ ՄԱԿի մէջ եւս:
Մեզի համար երկրորդ հայրենիքը հոս է, Լիբանանն
է, ուր կ'ապրինք: Անշուշտ իբրեւ Լիբանանի քաղա-
քացի ունինք մեր պարտականութիւնները այս երկ-
րին հանդէպ, հակառակ անոր որ մենք ծագումով եւ
ազգութեամբ հայ ենք, սակայն քաղաքացիութեամբ
լիբանանցի ենք: Այս առիթով մենք ուզեցինք կոչ
ուղղել լիբանանահայութեան մասնակի այս ընտրու-
թիւններուն մասնակցելու, որպէսզի իւրաքանչիւր
լիբանանահայ կատարէ իր պարտականութիւնները:

Հ.- Ըստ ձեզի՞ քաղաքացիական քուէն ընդհան-
րապէս եւ լիբանանահայութեան քուէն յատկապէս ի՞նչ
կարեւորութիւն ունի:

Պ.- Ամէն քաղաքացի իր արժէքը ունի իր քուէին
ընդմէջէն: Մենք, որ լիբանանցի ենք, մեր քուէն ալ իր
լիբանանական արժէքը ունի այս մասնակի ընտրու-
թիւններուն: Հայ համայնքը իր մասնակցութեամբ
ցոյց պիտի տայ լիբանանցիին, որ մենք իսկապէս
հարազատ քաղաքացի ենք եւ չենք ապրիլ փակ շրջա-
գծին մէջ: Հակառակ անոր որ այս ընտրութիւնները
մասնակի են եւ մենք չունինք հայ թեկնածու, բայց
մենք մեր պարտականութիւնը պիտի կատարենք ընտ-
րելու այն, որ արժանաւոր է մեր ձայնին եւ խորհրդ-
դարանին մէջ լաւապէս պիտի ներկայացնէ այն ժող-
ովուրդը, որուն կողմէ ինք ընտրուեցաւ եւ որ պատ-
րաստ է պաշտպանելու բոլոր անիրաւուածներուն
չահերը: Մեր պարտականութիւնն է ընտրութիւննե-
րու բերած մեր մասնակցութեամբ փաստել, թէ մենք
կը գիտակցինք այդ իրողութեան եւ մեր ձայնը կու
տանք անոր, որուն արժանի կը նկատենք:

Հ.- Հիմա, որ կը գտնուիք ընտրութիւններու սե-
մին, ի՞նչ ունիք ըսելիք լիբանանահայութեան:

Պ.- Ես միշտ հաւատացած եմ լիբանանահայութեան
միասնականութեան: Երբ հայուն եւ երկրին շահը
պահանջէ, որ մենք ըլլանք միակամ ու միասիրտ եւ
մէկ ուժ, մենք միշտ ցոյց տուած ենք, թէ հակառակ
զաղափարներու եւ համայնքներու տարբերութեան,
մենք մէկ ենք եւ երկրին շահը կը նկատենք ամէն
բանէ վեր: Այս իրողութեան փաստը մենք տուած ենք
տարիներ շարունակ եւ ես կ'ուզեմ, որ հայը ինչ դա-
ւանանքի կամ գաղափարախօսութեան տէր ըլլալ
միշտ միացած ըլլալ իր իրաւունքները պահպանելու
համար եւ իր միութեամբ ապացուցէ, թէ իտէալ քա-
ղաքացի է: Մենք 80 տարի առաջ հոս հասանք ոտարո-
պիլ եւ Լիբանանը մօր մը պէս ընդունեց մեզ եւ մենք
այսօր ունինք մեր դպրոցները, միութիւնները եւ մենք
ոչինչ ինչպիսիք ենք այս երկրին համար՝ ներդրում
ունեցած ենք բոլոր բնագաւառներուն մէջ: Այսօր
մենք անգամ մը եւս պէտք է ցոյց տանք մեր ինքնու-
թիւնը եւ հաւաքաբար պէտք է մասնակցինք մասնա-
կի ընտրութիւններուն՝ մեր ձայնը լսելի դարձնելու
համար:

ՄԵԹՆԻ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԹԻԼԻԱՍԻ Ը. Յ.Ղ. «ԱՂԲԱԼԵԱՆ»
ԱԿՈՒՄԲԸ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ
ԱՇԽՈՒԺ ԿԵԴՐՈՆ ՄԸ

Վերջին քսանամեա-
կին, Լիբանանի հայու-
թեան մէջ ամէնէն աւելի
մեծ տեղաշարժը կատար-
ւած է բնականաբար
դէպի Անթիլիաս եւ շրջա-
կայքը: Ընդհանուր այս
շրջանը այնքան մեծ է,
այնքան խիտ է հայու-
թեամբ, որ ընտրական
աշխատանքները բնակա-
նաբար կը դարձնեն
դժուար: Բայց Հ. Յ. Ղ.
«Աղբալեան» կոմիտէի եւ
անոր ընտրական մեքե-
նային համար յայտնա-
պէս դժուար ոչինչ կայ:
Աշխատանքները լաւա-
պէս կազմակերպուած ու
դասաւորուած են, ընտ-
րական յանձնախումբի
կողմէն գործող բոլոր յա-
րակից խմբակները կազմ
ու պատրաստ են եւ կը
սպասեն Յունիս 2ի ազ-
դանչանին:

Մեթնի ընտրութեան
գծով Անթիլիասի մեր
ակումբը անշուշտ իր
կողմին ունի նաքաշի
ակումբը եւ քանի մը այլ
ընտրական կեդրոններ,
որոնք մշտական կապի
մէջ են իրարու հետ:

«Աղբալեան»ի մեր թղթա-
կիցները եւ լուսանկա-
րելիները երէկ այցելեցին
«Աղբալեան» ակումբը,
ուր կարծէք ցոյց կար:
Համակիրներ, ընկերներ,
երիտասարդներ, պատա-
նիներ, ԼՕՊականներ, բո-
լորը ներկայ էին ու ամէն
մէկը գործ մը ունէր ըն-
լիք, պարտականութիւն
մը ունէր կատարելիք:
Մեր հարցումներով չու-
զեցինք խանգարել գա-
նոնք եւ դիմեցինք շրջա-
նի երթապահ ընկերով եւ
ընտրական պատասխա-
նատունին: Անշուշտ
անոնք մեր ակնկալածն
տարբեր բան չըսին եւ



«Աղբալեան» ակումբի մէջ



Նաքաշի մէջ

(Լուսանկարները՝ ՄՅԻՒՏԻՕ ՍԵՆԱԿԻ):

Հաստատեցին մեր տեղե-
կութիւնները, թէ ամէն
բան կ'ընթացի ընկա-
նոն վիճակի մէջ, ժողո-
վուրդը սիրով կ'ընդառա-
ջէ մեր կողմին եւ պատ-
րաստ է քուէարկելու ի
նպատ Դաշնակցութեան
զօրակցութիւնը վայելող
թեկնածուին:

Շուրջ տասը օրէ ի վեր
«Աղբալեան» առօրեայ դրու-
թեամբ կը ներկայացնէ
երկու շրջան եւ կը ծանօ-
թացնէ հոն տարուող
ընտրական աշխատանք-

ները: Բոլոր շրջաննե-
րուն մէջ կայ ժողովան աշ-
խատանք, իսկ բոլորին
հասարակ յայտարար
մեր ժողովուրդին քուէար-
կութեան մասնակցու-
թեան պատրաստակա-
մութիւնն է, որ ամէնէն
կարեւորն է թէ՛ իբրեւ լի-
բանանցի, թէ՛ իբրեւ հայ
քաղաքացի: Ուրեմն, բո-
լորիս ժամադրութիւնը՝ 2
Յունիս 2002, Մեթնի
քուէատուփեր: Յաւելեալ
մանրամասնութեանց
համար դիմել Հ. Յ. Ղ.
ակումբները:

Ի՞ՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԵՐԸ

Երէկ, լիբանանեան մա-
մուլը գլխաւորաբար արծար-
ծած է թէլ Սիւրի մօտ տեղի
ունեցած պաղեստինեան
անձնասպանական գործո-
ղիքները, որ պատճառած է
2 դուրի եւ 20 վիրատու: Ըստ
թերթերուն՝ պաղեստինեան
իշխանութիւնը խստի դա-
տապատած է գործողութե-
ան եւ պայն անարեւելա-
կան արարք նկատուած է:
«Սաֆիր» այս մասին գրած
է, «Միջ իսրայէլ կը շարու-
նակէ պաղեստինեան
շրջաններ ներխուժելու իր
ծրագիրը, ինքիֆատան
կառած կը մնայ նախատա-
կութեան գործողութիւննե-
րու ընտրանքին:

«Նախար» Պուշի հակապ-
ղեստինեան անդրադառնա-
լով նշած է, թէ նախագահը
ըսած է, որ Սաֆիրը պիտի
յուսախաբ ըրած է:
Նախագահ Պուշի այցե-
լութեան առնչութեամբ
«Լիուա» գրած է, «Մեծ ցոյ-
ցեղ Պերիին մէջ դիմաւորե-
ցին նախագահ Պուշը, որուն
պաշտպանութիւնը ստանձ-
նած էին տասը հազար ոս-
տիկաններ. «Ապալիս ցոյ-
ցերու օր» մըն ալ Պուշին կը
սպասէ Փարիզի մէջ:

«Քիֆա» ալ Արապի՝
նշած է, թէ Գերմանիոյ մէջ
ձորձ Պուշ եւրոպացիները
կը գրգռէ իրաքի դէմ, ըսե-
լով, թէ Սատտամ հիւսէյն
վտանգ կը սպառնայ համաշ-
խարհային պատուութեան:
Ամերիկեան վերջին իրա-
դարձութիւններուն գծով,
նոյն թերթը գրած է, թէ Պու-
Ստինի ձեռքադրութեան
մասին հրապարակուած
տեղուր մը կը բարձրացնէ
Նիւ Եորքի սակարանի բաժ-
նետններու սակարքը: Իսկ
«Սաֆիր» այս առնչութեամբ
անդրադարձած է այն երե-
ւոյթին, թէ նոր յարձակում-
ներուն մասին ամերիկեան
պաշտօնակազմը կ'ուշադրու-

ման հանդիսացան նախա-
գահական համաձայնու-
թեան, երբ բջիջային մա-
սին օրէնքի նախագիծը վա-
ւերացուցին. նախագիծը
Երեքշաբթի օր պիտի քննուի
խորհրդարանին կողմէ:
Մեթնի մասնակի ընտ-
րութիւնները յուսաւորաբար
ունենալու պիտի լինեն
մէջ կը դնէ իր ծովային ու-
ժերը: Հնդկաստան եւ Փա-
քիստան կը գտնուին մեծա-
խումբ մը նախաշեմին»,
գրած է «Նախար» օրաթեր-
թը: Իսկ «Տիար» նշած է, թէ
Հնդկաստան յայտարարեց
է որ ժամը հասած է պատե-
րապէս յաղթելու:

«Անուար» նշած է, թէ եր-
կար ժամանակէ իր վեր-
տաքին անգամ ըլլալով,
ցամաքային սահմանը վե-
րաքաղցուցաւ Սեւանական
Արաբիոյ եւ Իրաքի միջեւ:
«Լիուա» տեղեկացուցած է,
թէ Եգիպտոսի նախագահ
Հիւսէյն Մուսարաբ Յունի-
սի սկիզբը դարձեալ Ռա-
շինկըն պիտի այցելէ:

Տեղական գետնի վրայ,
թերթերը գրած են, թէ
Իրանիի հարցով քննու-
թիւնները ոչինչ յայտնաբե-
րած են ցարդ եւ հարցին աւ-
հողութեամբ մօտեանայու ամ-
բաստանութիւնները բազ-
մացած են. միւս կողմէ, դա-
տախապ Ստոտումարագ ար-
դիւններ կը նախատեսէ
Իրանիի սպանութեան հար-
ցով ընթացող քննութիւն-
ներին, խօսելով նոր տրե-
ւելներու մասին: «Անուար»
նշած է, թէ «Հրդպալիս» կը
հերքէ իր գործունէութեան
մասին ամերիկեան պանա-
պան աղբիւրներու եւ հաս-
տատութիւններու հրապար-
ակած լուրերը: «Սաֆիր»-
ի առաջին էջի խորագիրներէն
է. «Նորիդրարանական
յանձնախումբերը թարգ-

ԱՅՈ ԿԵԹՕ, ԵՐԲԵՔ «ԿԱԹՕ»

Լիբանանի մէջ երեսփոխանական ընտրութիւն-
ներ ընդհանրապէս լիբանանահայութիւնը յու-
սարձակի տակ առած է տարիներէ ի վեր, որովհե-
տեւ ան Դաշնակցութեան ղեկավարութեամբ,
պանգումապէս եւ կարգապահ շարքերով քուէա-
տուփ ուղղուած է: Հ. Յ. Ղ. ընտրական մեքենան
մատ խածնել տուած է եւ արեւելամի, եւ հակառա-
կորդին: Այս առնչութեամբ լիբանանեան քաղա-
քական վերահսակը կամ երեսփոխանական թեկ-
նածուները հակադիր մօտեցում ունեցած են, եր-
կար տարիներէ ի վեր, այս իրողութեան դիմաց:
Իրատես եւ չէպոք քաղաքական դէտեր կամ ժո-
ղովրդային խաւի ներկայացուցիչներ արդար եւ
տեղին գտած են լիբանանահայութեան պանգու-
մային ու կարգապահ մասնակցութիւնը երեսփո-
խանական ընտրութեան: Անոնք յայտարարեցին
նշած են Հ. Յ. Ղ. Դաշնակցութեան հանդէպ լիբանա-
նահայութեան ունեցած հնազանդ, եւ կուսակցութեան
առաջնորդութեամբ եւ ձայնով, լիբանանահայու-
թեան ներդրումին Լիբանանի հայրենիքի վերել-
քին եւ բարգաւաճման մէջ:

Վերոյիշեալ խաւին կը հակադրուին, ընդհան-
րապէս բոլոր պէն քաղաքագետներն ու երեսփո-
խանական թեկնածուները, որոնք գտնուած են
ընտրութեանց առիթով Դաշնակցութեան հակադիր
ձակատի վրայ:

Անոնց համար լիբանանահայութեան պանգու-
մային քուէարկութիւնը, Հ. Յ. Դաշնակցութեան
առաջնորդութեամբ կը դիտուի, որպէս «կեթօ»-ի հա-
ւաքականութիւն մը, իսկ հարապատ թաղերը, ի մաս-
նաւորի Պուրձ Համուրը «կեթօ»: Այլ շրջաններու
մէջ, որ շրջանի որ ժողովուրդը դարձեալ պան-
գումային կը քուէարկէ, որոշ առաջադրութիւն, կամ
քաղաքական կուսակցութեան մը, որպէս երեւոյթ
մեր պատեհապաշտ քաղաքագետներուն կողմէ կը
դիտուի որպէս պատն ընտրանքի արտայայտու-
թիւն: Հոն չկայ «կեթօ» բառին ակնարկութիւնը:

Եթէ լիբանանահայութեան պանգումային
քուէարկութեան որպէս արդիւնք ձայնարկային ձեւ
տեսնելու մը, ... յանցաւորը հայութիւնն է, ու
«մեղաւոր է Դաշնակցութիւնը»: Իսկ այդ նոյն մար-
դը համար բնական է, որ իրենք քուէարկեն հայա-
նուն թեկնածուի մը որպէս լիբանանահայութեան
ներկայացուցիչ, հոգ չէ թէ իր ստացած աւելի քան
քանակից հապար քուէներու միայն երկուքնէն երեք
հարիւր ըլլայ իսկական քուէ, հոս նաեւ անոնք կը
հաւատան, թէ իրենք կ'ընտրեն սպառնալիք ան-
կայացուցիչը Մեթնի վերջին երեսփոխանական
ընտրութեան վկայ ընտրութեանց օրերու, այլ տե-
ղեր բախումներով մարդիկ մեռնին, ինչպէս տեղե-
ր զոհանան, քուէարկողի պահուած յիշեալ ընտրա-
կան կեդրոնին երկտրականութեան հոսանքը յան-
կարծ դադրի, առեւանգումներ ըլլան կամ դրամով
քուէ գնուի, դուք հասկցե՛ք խիղճը գնուի. կաշառ-
քով քուէներ կորուրին, այս բոլորը այս երկրորդ
խմբակին համար, բնական երեւոյթներ են, որ
կրնան պատահիլ ընտրութեանց առիթով, «հօ վեր-
ջապէս Լիբանան Չուիցեցիւն չէ, երրորդ աշխարհի
երկիրներէն է» կ'առաջարկեն անոնք: Իսկ եթէ պա-
տահի մեր տղայք Պուրձ Համուր մէջ հանդիպած
ըլլան դուրսէն եկած արհեստավար զրգոյիներու
ու վարձկաններու ու քաշտը տեղի ունեցած ըլ-
լայ, յանկարծ պարտուած թեկնածուներ ու իրենց
համախոհներ հաւար կը փրցնեն: Պուրձ Համուրը
կը նմանցնեն պիտորական պօրանցի, իսկ Դաշ-
նակցութիւնը բնապատ պետութեան. հոս որքան
տեղիին է յիշել եւ այժմէական, ձորձ Օրուիէի «Անա-
տուններու ազարակը»: Գիրքին միտքը, թէ «Բոլոր
անատունները հաւատար են, սակայն կարգ մը անա-
տուններ աւելի հաւատար: Կամ հին - յունական
խօսքը. «Ինչ որ վայել է ձեռնիկ վայել էլ է»:

Ժամանակն է, որ մարդիկ դադրին նայիլ լիբա-
նանահայութեան որպէս «կաթօ»: «Պուրձ Համու-
րը ամբաստանեմ «կեթօ»: Լիբանանահայութիւնը
յարիներէ ի վեր փաստած է, թէ ան նախընտրած է
այդ պատեհապաշտներուն աչքին մնայ որպէս «կե-
թօ», քան թէ անոնց անկուստ ախորժակին դառնայ
համարան «կաթօ»:


ՊԵՏՐՈՍ ՇԵՄՄԷՍԵԱՆ

ONE SECOND IS ENOUGH...
Արկաթե կը Պասաշ Երկարժեքային Մը Մեք...
...BUT WE USE THEM ALL.
...Իսկ Մեք Ներկայ Եւ Աւել Երկարժեքային.
ԱՖՀԻԼ AFHIL
Աֆտ-ի Ընթ, Բ. Յարկ, 76ն. եւ Յարկ, (01) 262231-242556-242557
Imm. AFED, 28me étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՄԵԹՆԻ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԱՆ ԱՌԻԹՈՎ
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԸՄԻԱԲ
Կազմակերպութեամբ՝
Ը. Յ. Ղ. ԶԱՐՈՉՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻՆ
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 31 Մայիս 2002, երեկոյեան ժամը 9:00ին, «Շաղոյեան» կեդրոնի կից գտնուող կառատան մէջ:

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԵՐ
«ՈՏՆԼՈՒԱՅ»Ի ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Քրիստոնեությունը իր հաւատացեալներուն ուսուցանած է Աւետարանի դասերը, որոնք կը փոխանցուին Խորհուրդներով: Հոգեւոր դաստիարակութիւն մը, որ քրիստոնեացիներուն կ'առաջնորդէ դէպի լուսաւորնամբաներ:



Հայաստանեայց Առաքելական եկեղեցին իր գոյութեան առաջին օրերէն հետամուտ եղած է հաւատացեալները հրաւիրելու գիտակից վերաբերումի՝ հանդէպ Աւետարանի սկզբունքներուն: Ու առաւել ցայտուն դարձնելու համար Յիսուսի առակներուն եւ քարոզներուն, պատգամներուն եւ հրաշքներուն իմաստը եւ անկէ բխող դասերը, դիմած է նաեւ կենդանի օրինակի, արարողութեան հաղորդական միջոցներու: Աւետարանի այս դասերէն քաղուած Ոսնուայի խորհուրդը կու գայ քրիստոնեայ հաւատացեալին յիշեցնելու, թէ կարեւոր է, շատ անհրաժեշտ՝ Խոնարհութիւնը: Ու խորան կը բարձրացնէ Հայաստանեայց եկեղեցին, համայն քրիստոնեայ եկեղեցին, Յիսուսի կենցաղին վերջին օրերու փոխանցած դասը, որ կը բացատրուի Ոսնուայով:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբաններէն Նարեկ Մ. վրդ. Ալեմէ՛գեան գիրքով մը հանդես եկած է ծիսական այս արարողութիւնը լաւագոյն ձեւով բացատրելու: Ան չորս լեզուներով գրած է (հայերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ արաբերէն) յիշեալ արարողութեան մասին, թէ ինչպէս եւ ինչո՞ւ կը կատարուի այս խորհուրդը եւ ինչո՞ւ այնքան կ'արժեւորէր զայն Հայաստանեայց եկեղեցին:

Նարեկ Մ. վրդ. (այժմ եպիսկոպոս), բազմիցս այցելած է Միացեալ Նահանգներ, Քաղաք, Եւրոպա եւ հայկական գաղութներու մէջ տեսած է մեր ժողովուրդին մեծ մասը, որ խորքի մէջ չի գիտեր Ոսնուային իմաստը: Հետեւաբար ան յարմար դասած է չորս լեզուներով բացատրել մեր գաւակներուն, աշխարհի բոլոր երկիրներուն տակ ապրող հայու գաւակներուն, բազմալեզու մեր հայրենակիցներուն յստակ ծանօթութիւններ փոխանցելու Աւետարանի այս շատ պերճախօս եւ ուսանելի դասին մասին:

Կրօնագիտական գրակնութիւն մը, որ իր օգուտը ունի մեր ընկերութեան համար: Ոսնուայի արարողութիւնը միայն բեմական հանդիսադրութիւն չէ: Յիսուս, երբ իր աշակերտներուն ոտքերը լուաց եւ ապա իւրով օծեց գանձը, ըսաւ. «Ինչ որ եւ ըրի, դուք մի նայել ըրէք»: Սա կը նշանակէ՝ հետեւեցէք իմ սորվեցուցած խոնարհութեան դասին, որովհետեւ «Ո՛վ որ ինքզինքը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ, իսկ ո՛վ որ ինքզինքը կը բարձրացնէ, պիտի խոնարհի»...

Քրիստոնեութիւնը հիմնուած է սիրոյ եւ խոնարհութեան սկզբունքներուն վրայ: Այս գիրքը կը շեշտէ ու կը յիշեցնէ, թէ առանց խոնարհութեան չկայ սէր՝ ընկերութեան մէջ, եւ առանց սիրոյ կարելի չէ հաստատել կամ իրագործել խոնարհութիւն: Իրականութիւն մը, նշմարտութիւն մըն է այս, գոր գիտենք քրիստոնեաները, բայց հետեւելը այս դասերուն յամալ կը մոռցուի:

